ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37460)474144, 474131, 474106

_____№ _____

Ձեր_____ առ _____

«Հետաքննող լրագրողներ» հասարակական
կազմակերպության նախագահ
պարոն Է. Բաղդասարյանին

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի 27.01.2017թ. №02/22.5/1474-17 հանձնարարականի՝ կապված «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության 10.01.2017թ. ՀՔ-16-12/11 գրության հետ, հայտնվում է հետևյալը.

Երևանի Աբովյան փողոցի ներկայումս թիվ 3 (նախկինում թիվ 29) հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային (արխիվային) գործում առկա նյութերի հիման վրա մեր 27.08.2015թ. N ԱՄ/5667-15 գրությամբ Ձեզ տեղեկատվություն է տրամադրվել այն մասին, որ նշված հասցեում գտնվող շենքից 255.01 քմ մակերեսով նկուղային տարածքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության և «Թիֆլիս» ՍՊ ընկերության միջև 08.05.1996թ. կնքված սեփականաշնորհման պայմանագրով օտարվել է վերջինիս ու դրանից ծագող սեփականության իրավունքը գրանցվել է 18.04.2003 թվականին:

Շենքի մյուս տարածքները՝ դեպի Աբովյան փողոցին հարող 1-ին, 2-րդ հարկերը և դեպի նախկին Լալայանց փողոցին հարող նկուղային և 1-ին, 2-րդ հարկերը (1056.19քմ ընդհանուր մակերեսով) սեփականության, իսկ դրանցով զբաղեցված 0.07945 հա մակերեսով հողամասը օգտագործման իրավունքով 03.07.2001թ. գրանցվել են «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերություն» հասարակական կազմակերպության անվամբ՝ հիմք ընդունելով ՀՍՍՌ Մինիստրների Սովետի 24.11.1955թ. №699 կարգադրությունը, որով թույլատրվել է Երևանի Աբովյան 29 հասցեում գտնվող գույքը հանել ՀՍՍՌ արտաքին գործերի նախարարության հաշվեկշռից և փոխանցել Արտասահմանյան երկրների հետ

մշակութային կապի հայկական ընկերության (ԱՕԿՍ) հաշվեկշիռ, ինչպես նաև տվյալ գույքը հասարակական կազմակերպության հաշվեկշռում գտնվելու վերաբերյալ 22.06.2001թ. №Ա-97 տեղեկանքը, հողհատկացման վերաբերյալ Երևանի քաղաքապետի 07.05.2001թ. №456 որոշումն ու դրա հիման վրա հասարակական կազմակերպության հետ 01.06.2001 թվականին կնքված հողօգտագործման պայմանագիրը:

Վերը ներկայացված, ինչպես նաև «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերություն» հասարակական կազմակերպության կողմից հետագայում նշված անշարժ գույքի հետ կապված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Հարգանքով՝ [redacted] Ա. Մուսայան

Խ. Գասպարյան ☎/060/47-41-37
Ա. Ալեքսանյան ☎/060/47-41-02